ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ
ՄԵՂՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՈՐՈՇՈՒՄ

15 ապրիլի 2021 թվական N29

ՄԵՂՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2021 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 15-Ի N4 ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 14-րդ և 17-րդ հոդվածներով, հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը՝ Մեղրի համայնքի ավագանին

որոշում է՝

1.Հաստատել Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Մեղրի համայնքի ավագանու 2021 թվականի ապրիլի 15-ի N4 արտահերթ նիստի օրակարգը՝

1)Մեղրի համայնքի Նռնաձոր բնակավայրի զարգացման ծրագրին հավանություն տալու մասին.

2)Մեղրի համայնքի վարչական տարածքում գտնվող և որպես «անհայտ» քաղաքացիների սեփականություն փոխանցված հողամասերը համայնքային սեփականություն ճանաչելու մասին.

3)Մեղրի համայնքի սեփականություն հանդիսացող գույքի նվիրաբերության մասին.

4)Մեղրի համայնքի վարչական սահմաններում ընդգրկված՝ պետական սեփականություն հանդիսացող հողամասի օտարմանը համաձայնություն տալու մասին.

5)Հողամասի նպատակային նշանակությունը փոխելու մասին.

6)Հողամասի նպատակային նշանակության փոփոխության նպատակով Մեղրի համայնքի Մեղրի քաղաքի համակցված տարածական պլանավորման փաստաթղթերում նախատեսվող փոփոխությունը քննարկելու մասին.

7)Մեղրի համայնքի ավագանու 2020 թվականի հոկտեմբերի 1-ի N66 որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին.

8)Մեղրի համայնքի ավագանու 2020 թվականի դեկտեմբերի 29-ի N82 որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին.

9)Մեղրի համայնքի ավագանու 2021 թվականի հունվարի 29-ի N5 որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին.

10)Մեղրի համայնքի 2021 թվականի բյուջեի առաջին եռամսյակի եկամուտների եվ ծախսերի կատարման ընթացքի մասին:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Կողմ (6)		Դեմ(0)	Ձեռնպահ(0)
ԶԱՔԱՐՅԱՆ ՀՐԱՅՐ	----------		
ՀԱԿՈԲՅԱՆ ԳԱՐԵԳԻՆ	----------		
ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ ՍՈՒՐԵՆ	----------		
ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ՀԱՐՈՒԹ	----------		
ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ ԿՈՍՏԱՆՏ	----------		
ՄԻՔԱԵԼՅԱՆ ՍԱՄՎԵԼ	----------		

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Մ. ԶԱՔԱՐՅԱՆ

2021թ. ապրիլի 15

ք. Մեղրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ
ՄԵՂՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՈՐՈՇՈՒՄ
15 ապրիլի 2021 թվական N30

ՄԵՂՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՆՈՒՆԱՁՈՐ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԻՆ
ՀԱՎԱՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով, Մեղրի համայնքի ավագանին

որոշում է՝

1.Հավանություն տալ «Մեղրիի տարածաշրջանի զարգացման» բարեգործական հիմնադրամի կողմից իրականացվող Մեղրի համայնքի Նոնաձոր բնակավայրի զարգացման ծրագրին՝ համաձայն հավելվածի:
2.Համայնքի ղեկավարին՝ ապահովել սույն որոշումից բխող անհրաժեշտ գործառույթների իրականացումը:

Կողմ (6)		Դեմ(0)	Ձեռնպահ(0)
ԶԱՔԱՐՅԱՆ ՀՐԱՅՐ	----------		
ՀԱԿՈԲՅԱՆ ԳԱՐԵԳԻՆ	----------		
ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ ՍՈՒՐԵՆ	----------		
ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ՀԱՐՈՒԹ	----------		
ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ ԿՈՍՏԱՆՏ	----------		
ՄԻՔԱԵԼՅԱՆ ՍԱՄՎԵԼ	----------		

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Մ. ԶԱՔԱՐՅԱՆ

2021թ. ապրիլի 15
ք. Մեղրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ
ՄԵՂՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՈՐՈՇՈՒՄ

15 ապրիլի 2021 թվական N31

ՄԵՂՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԵՎ ՈՐՊԵՍ «ԱՆՀԱՅՏ» ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՓՈԽԱՆՑՎԱԾ ՀՈՂԱՄԱՍԵՐԸ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի 2010 թվականի հունիսի 1-ի N186-Ն հրամանով հաստատված հրահանգի 9-րդ կետի 5-րդ ենթակետով, հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը՝ Մեղրի համայնքի ավագանին

որոշում է՝

1.ՀՀ Սյունիքի մարզի Մեղրի համայնքի վարչական տարածքում գտնվող և որպես «անհայտ» քաղաքացիների սեփականություն փոխանցված՝ 09-0005-0022-0004 կադաստրային ծածկագրով 0,01186 հա մակերեսով և 09-0037-0307-0001 կադաստրային ծածկագրով 0,11045 հա մակերեսով բնակավայրերի հողերի կատեգորիա՝ «բնակելի կառուցապատման հողեր» գործառնական նշանակության և 09-0005-0734-0015 կադաստրային ծածկագրով 0,06422 հա մակերեսով գյուղատնտեսական հողերի կատեգորիա՝ «վարելահող» հողատեսք հողամասերը՝ որոնց նկատմամբ գոյություն չունեն որևէ իրավունք հաստատող փաստաթուղթ՝ ճանաչել համայնքային սեփականություն:
2.Համայնքի ղեկավարին՝ եռամսյա ժամկետում ապահովել սույն որոշումից բխող անհրաժեշտ գործառույթների իրականացումը:

Կողմ (6) Դեմ(0) Ձեռնպահ(0)

ԶԱՔԱՐՅԱՆ ՀՐԱՅՐ ----------
ՀԱԿՈԲՅԱՆ ԳԱՐԵԳԻՆ ----------
ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ ՍՈՒՐԵՆ ----------
ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ՀԱՐՈՒԹ ----------
ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ ԿՈՍՏԱՆՏ ----------
ՄԻՔԱԵԼՅԱՆ.ՍԱՄՎԵԼ ----------

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Մ. ԶԱՔԱՐՅԱՆ

2021թ. ապրիլի 15
ք. Մեղրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ
ՄԵՂՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՈՐՈՇՈՒՄ
15 ապրիլի 2021 թվական N32

ՄԵՂՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԳՈՒՅՔԻ ՆՎԻՐԱԲԵՐՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 605-րդ հոդվածով, հաշվի առնելով համայնքի ղեկավարի առաջարկությունը՝ Մեղրի համայնքի ավագանին

որոշում է՝

1.Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Մեղրի համայնքի սեփականություն հանդիսացող, Ալվանք գյուղի 3-րդ փողոց թիվ 8 հասցեում գտնվող գույքը՝ 5483 քմ մակերեսով հողամասի վրա ամրակայված 499,9 քմ մակերեսով շենքը և 444,3քմ մակերեսով շինությունները (անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայական N10092015-09-0008) պաշտպանական կարիքների համար նվիրաբերել Հայաստանի Հանրապետությանը՝ ի դեմս ՀՀ պաշտպանության նախարարության՝ որպես նրա սեփականություն:
2.Ավագանու որոշումն ուժի մեջ մտնելուց հետո մեկամսյա ժամկետում ՀՀ պաշտպանության նախարարության հետ կնքել գույքի նվիրաբերության պայմանագիր՝ պայմանագրում սահմանելով, որ գույքային իրավունքների պետական գրանցումն իրականացվելու է նվիրաբերություն ստացողի միջոցների հաշվին:
3.Համայնքի ղեկավարին՝ ձեռնարկել սույն որոշումից բխող անհրաժեշտ գործառույթների իրականացումը:

Կողմ (6)		Դեմ(0)	Ձեռնպահ(0)
ԶԱՔԱՐՅԱՆ ՀՐԱՅՐ	----------		
ՀԱԿՈԲՅԱՆ ԳԱՐԵԳԻՆ	----------		
ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ ՍՈՒՐԵՆ	----------		
ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ՀԱՐՈՒԹ	----------		
ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ ԿՈՍՏԱՆՏ	----------		
ՄԻՔԱԵԼՅԱՆ ՍԱՄՎԵԼ	----------		

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Մ. ԶԱՔԱՐՅԱՆ

2021թ. ապրիլի 15
ք. Մեղրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ
ՄԵՂՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՈՐՈՇՈՒՄ

15 ապրիլի 2021 թվական N33

ՄԵՂՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ ԸՆԴԳՐԿՎԱԾ՝ ՊԵՏԱԿԱՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ՕՏԱՐՄԱՆԸ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետով, հողային օրենսգրքի 61-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի ապրիլի 12-ի N286 որոշմամբ հաստատված կարգի դրույթներով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի հունվարի 14-ի N16-Ն որոշմամբ հաստատված կարգի դրույթներով և հիմք ընդունելով Մեղրի համայնքի ղեկավարի առաջարկությունը՝ Մեղրի համայնքի ավագանին

որոշում է՝

1.Տալ համաձայնություն՝ Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Մեղրի համայնքի Լեհվազ գյուղում գտնվող, պետական սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշանակության 0,64257 հա մակերեսով արոտավայրի (09-037-0307-0001 կադաստրային ծածկագրից) աճուրդային կարգով օտարմանը՝ մեկնարկային գին սահմանելով 385 550 (երեք հարյուր ութսունհինգ հազար հինգ հարյուր հիսուն) ՀՀ դրամ:
2.Համայնքի ղեկավարին՝ ապահովել սույն որոշումից բխող անհրաժեշտ գործառույթների իրականացումը:

Կողմ (6)		Դեմ(0)	Ձեռնպահ(0)
ԶԱՔԱՐՅԱՆ ՀՐԱՅՐ	----------		
ՀԱԿՈԲՅԱՆ ԳԱՐԵԳԻՆ	----------		
ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ ՍՈՒՐԵՆ	----------		
ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ՀԱՐՈՒԹ	----------		
ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ ԿՈՍՏԱՆՏ	----------		
ՄԻՔԱԵԼՅԱՆ ՍԱՄՎԵԼ	----------		

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Մ. ԶԱՔԱՐՅԱՆ

2021թ. ապրիլի 15
ք. Մեղրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ
ՄԵՂՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՈՐՈՇՈՒՄ
15 ապրիլի 2021 թվական N34
ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 29-րդ կետով, Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին կետով, ՀՀ կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի N 1918-Ն որոշմամբ և հիմք ընդունելով ՀՀ վարչապետի 2001 թվականի օգոստոսի 13-ի թիվ 599 որոշմամբ ստեղծված հողերի օգտագործման ժամանակավոր սխեմաների համաձայնեցման միջգերատեսչական հանձնաժողովի 29.03.2021թ. N57 դրական եզրակացությունը, համայնքի ղեկավարի առաջարկությունը՝ Մեղրի համայնքի ավագանին

որոշում է՝

1.ՀՀ Սյունիքի մարզի Մեղրի համայնքի Ալվանք բնակավայրի հողերի օգտագործման ժամանակավոր սխեմայում, համայնքային սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշանակության հողերից 0.0285 հեկտար մակերեսով խաղողի այգի (կադաստրային ծածկագիր՝ 09-009-0126-0008, անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայական՝ N13052020-09-0037)՝ համաձայն հավելվածի, փոխադրել էներգետիկայի, կապի, տրանսպորտի կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների հողերի կատեգորիա՝ «կապի օբյեկտների հողեր» գործառնական նշանակությամբ՝ բջջային կայանի օրինականացման համար:
2.Համայնքի ղեկավարին՝ ապահովել սույն որոշումից բխող անհրաժեշտ գործառույթների իրականացումը:

Կողմ (6)		Դեմ(0)	Ձեռնպահ(0)
ԶԱՔԱՐՅԱՆ ՀՐԱՅՐ	----------		
ՀԱԿՈԲՅԱՆ ԳԱՐԵԳԻՆ	----------		
ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ ՍՈՒՐԵՆ	----------		
ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ՀԱՐՈՒԹ	----------		
ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ ԿՈՍՏԱՆՏ	----------		
ՄԻՔԱԵԼՅԱՆ ՍԱՄՎԵԼ	----------		

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Մ. ԶԱՔԱՐՅԱՆ

2021թ. ապրիլի 15
ք. Մեղրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ
ՄԵՂՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՈՐՈՇՈՒՄ
15 ապրիլի 2021 թվական N35

ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ՄԵՂՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՄԵՂՐԻ ՔԱՂԱՔԻ ՀԱՄԱԿՑՎԱԾ ՏԱՐԱԾԱԿԱՆ ՊԼԱՆԱՎՈՐՄԱՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐՈՒՄ ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ ՔՆՆԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 42-րդ մասով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի N1920-Ն որոշմամբ և հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը՝ Մեղրի համայնքի ավագանին

որոշում է՝

1.Հավանություն տալ ՀՀ Սյունիքի մարզի Մեղրի համայնքի Մեղրի քաղաքի համակցված տարածական պլանավորման փաստաթղթերում նախատեսվող փոփոխություններին, ըստ որի առաջարկվում է Մեղրի համայնքի վարչական տարածքում գտնվող. համայնքային սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշանակության հողերից 0,002 հա մակերեսով այլ հողատեսքը /09-005-0734-0023 կադաստրային ծածկագրից/ փոխադրել էներգետիկայի, կապի, տրանսպորտի կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների հողերի կատեգորիա՝ «էներգետիկայի օբյեկտների հողեր» գործառնական նշանակությամբ՝ տրանսֆորմատորային ենթակայան կառուցելու համար:
2.Համայնքի ղեկավարին՝ կազմել և օրենսդրությամբ սահմանված կարգով հողերի օգտագործման ժամանակավոր սխեմաների համաձայնեցման միջգերատեսչական հանձնաժողովի համաձայնեցմանն ներկայացնել համապատասխան հողաշինարարական գործ:

Կողմ (6)		Դեմ(0)	Ձեռնպահ(0)
ԶԱՔԱՐՅԱՆ ՀՐԱՅՐ	----------		
ՀԱԿՈԲՅԱՆ ԳԱՐԵԳԻՆ	----------		
ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ ՍՈՒՐԵՆ	----------		
ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ՀԱՐՈՒԹ	----------		
ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ ԿՈՍՏԱՆՏ	----------		
ՄԻՔԱԵԼՅԱՆ ՍԱՄՎԵԼ	----------		

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Մ. ԶԱՔԱՐՅԱՆ

2021թ. ապրիլի 15
ք. Մեղրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ
ՄԵՂՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՈՐՈՇՈՒՄ
15 ապրիլի 2021 թվական N36

ՄԵՂՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 1-Ի N66 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի» մասին օրենքի 33-րդ հոդվածով և հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը՝ Մեղրի համայնքի ավագանին

որոշում է՝

1.Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Մեղրի համայնքի ավագանու 2020 թվականի հոկտեմբերի 1-ի «Հողամասի նպատակային նշանակության փոփոխության նպատակով Մեղրի համայնքի Կարճևան բնակավայրի հողերի օգտագործման ժամանակավոր սխեմայում նախատեսվող փոփոխությունը քննարկելու մասին» N66 որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները՝
1)որոշման վերնագիրը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝ «Հողամասի նպատակային նշանակության փոփոխության նպատակով Մեղրի համայնքի Կարճևան բնակավայրի համակցված տարածական պլանավորման փաստաթղթում նախատեսվող փոփոխությունը քննարկելու մասին».
2) որոշման հղման մեջ «1918» թիվը փոխարինել «1920» թվով,
3) որոշման 1-ին կետում «հողերի օգտագործման ժամանակավոր սխեմայում» բառերը փոխարինել «համակցված տարածական պլանավորման փաստաթղթում» բառերով:

Կողմ (6)		Դեմ(0)	Ձեռնպահ(0)
ԶԱՔԱՐՅԱՆ ՀՐԱՅՐ	----------		
ՀԱԿՈԲՅԱՆ ԳԱՐԵԳԻՆ	----------		
ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ ՍՈՒՐԵՆ	----------		
ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ՀԱՐՈՒԹ	----------		
ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ ԿՈՍՏԱՆՏ	----------		
ՄԻՔԱԵԼՅԱՆ ՍԱՄՎԵԼ	----------		

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Մ. ԶԱՔԱՐՅԱՆ

2021թ. ապրիլի 15
ք. Մեղրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ
ՄԵՂՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՈՐՈՇՈՒՄ
15 ապրիլի 2021 թվական N37
ՄԵՂՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2020 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 29-Ի N82 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի» մասին օրենքի 33-րդ հոդվածով և հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը՝ Մեղրի համայնքի ավագանին

որոշում է՝

1.Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Մեղրի համայնքի ավագանու 2020 թվականի դեկտեմբերիի 29-ի «Հողամասի նպատակային նշանակության փոփոխության նպատակով Մեղրի համայնքի Վարդանիձոր բնակավայրի հողերի օգտագործման ժամանակավոր սխեմայում նախատեսվող փոփոխությունը քննարկելու մասին» N82 որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները՝
1)որոշման վերնագիրը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝ «Հողամասի նպատակային նշանակության փոփոխության նպատակով Մեղրի համայնքի Վարդանիձոր բնակավայրի համակցված տարածական պլանավորման փաստաթղթում նախատեսվող փոփոխությունը քննարկելու մասին».
2) որոշման հղման մեջ «1918» թիվը փոխարինել «1920» թվով.
3) որոշման 1-ին կետում «հողերի օգտագործման ժամանակավոր սխեմայում» բառերը փոխարինել «համակցված տարածական պլանավորման փաստաթղթում» բառերով:

Կողմ (6) Դեմ(0) Ձեռնպահ(0)
ԶԱՔԱՐՅԱՆ ՀՐԱՅՐ
ՀԱԿՈԲՅԱՆ ԳԱՐԵԳԻՆ
ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ ՍՈՒՐԵՆ
ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ՀԱՐՈՒԹ
ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ ԿՈՍՏԱՆՏ
ՄԻՔԱԵԼՅԱՆ ՍԱՄՎԵԼ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Մ. ԶԱՔԱՐՅԱՆ

2021թ. ապրիլի 15
ք. Մեղրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ
ՄԵՂՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՈՐՈՇՈՒՄ
15 ապրիլի 2021 թվական N38
ՄԵՂՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2021 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 29-Ի N5 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետով, «Նորմատիվ իրավական ակտերի» մասին օրենքի 33-րդ հոդվածով և հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը՝ Մեղրի համայնքի ավագանին

որոշում է՝

Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Մեղրի համայնքի ավագանու 2021 թվականի հունվարի 29-ի «2021 թվականին օտարման կամ օգտագործման տրամադրման ենթակա հողամասերի ցանկը հաստատելու մասին» N 5 որոշման հավելվածներում կատարել փոփոխություններ և լրացումներ՝ համաձայն N 1 և N 2 հավելվածների:

Կողմ (6)		Դեմ(0)	Ձեռնպահ(0)
ԶԱՔԱՐՅԱՆ ՀՐԱՅՐ	----------		
ՀԱԿՈԲՅԱՆ ԳԱՐԵԳԻՆ	----------		
ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ ՍՈՒՐԵՆ	----------		
ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ՀԱՐՈՒԹ	----------		
ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ ԿՈՍՏԱՆՏ	----------		
ՄԻՔԱԵԼՅԱՆ ՍԱՄՎԵԼ	----------		

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Մ. ԶԱՔԱՐՅԱՆ

2021թ. ապրիլի 15
ք. Մեղրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ
ՄԵՂՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

15 ապրիլի 2020 թվականի N 39

ՄԵՂՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ 2021 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԱՌԱՋԻՆ ԵՌԱՄՍՅԱԿԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԵՎ ԾԱԽՍԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԸՆԹԱՑՔԻ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով, 38-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» օրենքի 35-րդ հոդվածով, հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը՝ Մեղրի համայնքի ավագանին

որոշում է՝

1.Ընդունել ի գիտություն Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Մեղրի համայնքի 2021 թվականի բյուջեի առաջին եռամսյակի եկամուտների և ծախսերի կատարման ընթացքի մասին համայնքի ղեկավարի կողմից տրված հաղորդումը՝ համաձայն հավելվածի:
2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

Կողմ (6)		Դեմ(0)	Ձեռնպահ(0)
ԶԱՔԱՐՅԱՆ ՀՐԱՅՐ	----------		
ՀԱԿՈԲՅԱՆ ԳԱՐԵԳԻՆ	----------		
ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ ՍՈՒՐԵՆ	----------		
ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ՀԱՐՈՒԹ	----------		
ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ ԿՈՍՏԱՆՏ	----------		
ՄԻՔԱԵԼՅԱՆ ՍԱՄՎԵԼ	----------		

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Մ. ԶԱՔԱՐՅԱՆ

2021թ. ապրիլի 15
ք. Մեղրի